

Տեղեկատվություն

2013թ. <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում Արարատի մարզում իրականացված միջոցառումների վերաբերյալ

ՀՀ Արարատի մարզպետարանը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում 2013թ. հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում մարզի Վեդի, Արտաշատ, Մասիս, Արալեզ, Այնթապ, Նոր Խարբերդ և Տափերական համայնքներում հյուրընկալել են շուրջ 111 սփյուռքահայ երեխաների:

Համայնքների մշակույթի տներում կազմակերպվել են ուրախ ժամանցային միջոցառումներ: Մարզպետարանի նախաձեռնությամբ հյուրընկալող ընտանիքները կազմակերպել են ճանաչողական այցելություններ մարզի պատմամշակութային հուշարձաններ:

Արարատի մարզպետարանը սփյուռքահայ երիտասարդների համար կազմակերպել է ուրախ ժամանցային հանդիպում Արտաշատի զբոսայգում, որին մասնակցել են ՀՀ Արարատի մարզպետը, մարզպետի տեղակալները, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավարը, նախարարության և մարզպետարանի այլ պաշտոնատար աշխատակիցներ և հյուրընկալող ընտանիքներ: Միջոցառմանը մասնակցած շուրջ 90 սփյուռքահայ երիտասարդների համար Արտաշատի քաղաքային զբոսայգում կազմակերպվեց համերգային ծրագիր՝ մարզի պարային խմբերի ու անհատ կատարողների մասնակցությամբ: